

## ՀԱՅՐԵՆԻՔ-ՍՓՅՈՒՔ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳԻՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ՀԱՋՈՂՎԱԾ ՓՈՐՁ

Հայրենիք-Սփյուռք հարաբերությունների պատմությանը նվիրված պատմ. գիտ. թեկ. ք. Պետրոսյանի աշխատության վերաբերյալ մեր խոհերն ու մտորումները թղթին էինք հանձնել տակավին մեկ տարի առաջ: Պատեհությունը հնարավորություն չէր ընձեռել աշխատության մասին մեր մոտեցումները ներկայացնելու հանրությանը: ք. Պետրոսյանի աշխատանքը «Հայկաշեն Ուզունյան» գրական մրցանակի արժանանալու և Երևանի Թեքեյան մշակութային կենտրոնում այն հանդիսավորությամբ հեղինակին հանձնելու հաճելի արարողությունը մեկ անգամ ևս հիշյալ աշխատությանն անդրադառնալու լրացուցիչ առիթ դարձավ: Հենց այդտեղ էլ հասարակական, մշակութային, գիտական երևելի հանրության հետ մեր խոհերը կիսեցինք և գնահատեցինք ք. Պետրոսյանի «Հայրենիք-Սփյուռք հարաբերությունները 1988-2001 թթ.» խորագիրը կրող ուշագրավ և արժեքավոր աշխատությունը:

Իբրև հայոց բեկված ճակատագրի անտրոհելի բաղադրիչ և պատմության անարդարության անհատակ բովանդակության դեմ ուղղված պերճախոս վկայություն, հայոց նորագույն շրջանի պատմության մեջ բացառիկ դերակատարություն ունի Հայկական Սփյուռքը: Այն հայ ժողովրդի բազմադարյան գոյամարտի, ճակատագրի մարտահրավերներին դիմակայելու և հայոց ոգու հարատևության, անխորտակելի կամքի դրսևորումն է:

ժամանակակից հայ Սփյուռքը ձևավորվել է 20-րդ դարի առաջին տասնամյակներին, երբ Օսմանյան կայսրության իրականացրած արևմտահայության ցեղասպանության հետևանքով բազմահազար հայեր հայրենագրկվեցին՝ սփռվելով աշխարհով մեկ: Իբրև քաղաքական նոր գործոն գոյացավ Հայկական Սփյուռքը: Վերջինս համալրեց ինչպես նախկին հայկական գաղթավայրերը, այնպես էլ ձևավորեց նոր հայկական համայնքներ: Հայկական Սփյուռքի համայնքներից ամեն մեկը մեր ժողովրդի բեկորների կենսունակության, մաքառումի, վերապրելու ու գոյապահպանության կղզյակներ դարձան՝ իրենց ինքնատիպ, շատ տարբեր կոլորիտներով, բայց և նույնքան միասնական ձգտումներով, նպատակներով՝ հնարավորինս պահել, պահպանել ազգային նկարագիրն ու կերպը, սերունդներին դաստիարակել հայեցի, ազգային մտածողությունը զերծ պահել օտար ազդեցությունից, այլ կերպ ասած, կանխել հայության ուժացումը օտար ափերում: Չնայած արտերկրում հայությունը կարողացավ ստեղծել կայուն հայկական համայնքներ, հիմնեց դպրոցներ, եկեղեցիներ, կազմակերպություններ, որոնց միջոցով փորձում է պահպանել իր ինքնությունը, սակայն սփյուռքահայության հարատևման հիմնական երաշխիքը Մայր հայրենիքի՝ Հայաստանի առկայությունն է: Ասել է, թե Սփյուռքի լինելիության և հայապահպանության գլխավոր առիավատյան հզոր և անվտանգ Մայր հայրենիքն է: Այս խորհախորհուրդ, անհերքելի ճշմարտությունը մշտապես հստակորեն գիտակցվել է թե՛ Մայր Հայրենիքում և թե՛, առավելապես, Սփյուռքում:

Հայրենիք-Սփյուռք կապի ընկալման հիմքում դնելով միասնական հայրենիքի գաղափարը՝ երկուստեք ջանքեր են գործադրվել այդ կապերը ամրապնդելու և առարկայական դարձնելու իմաստով: Դրանք դրսևորվեցին ի սկզբանե՝ թե՛ Հայաստանի Հանրապետության 1918-1920 թթ. կարճատև գոյության և թե՛ Խորհրդային իշ-

խանութան տարիներին՝ հայրենադարձության, Հայաստանի օգնության կոմիտեի (ՀՕԿ) գործունեության և մշակութային առնչությունների ճանապարհով: Ի տարբերություն Խորհրդային մյուս ժողովուրդների, որոնք արտասահմանում ունեին վտարանդիներ՝ հիմնականում հակախորհրդային տրամադրություններով, ապա Հայկական Սփյուռքը գերազանցապես բարեկամական, հայրենասիրական դիրքորոշում ուներ Խորհրդային Հայաստանի նկատմամբ: Պատահական չէ, որ Խորհրդային կառավարությունը չէր խոչընդոտում, նույնիսկ խրախուսում էր սփյուռքահայության հետ գիտական և մշակութային կապերը: Այդ նպատակով 1964 թ. ստեղծվեց Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտե: Որոշակի աշխատանքներ ծավալվեցին սփյուռքահայ առաջադիմական կազմակերպությունների, գիտնականների, մշակույթի գործիչների հետ՝ կապերի և համագործակցության ամրապնդման ուղղությամբ: Համաձայն 1957 թ. հունիսի 18-ի ԽՄԿԿ ԿԿ-ի «Արտասահմանում բնակվող հայերի շրջանում աշխատանքների բարելավման ուղղությամբ միջոցառումների մասին» որոշման, Խորհրդային Հայաստանի գիտնականները պատրաստեցին մի շարք գրքեր Սփյուռքի հայկական դպրոցների համար: Նկատի ունենալով արևմտահայ լեզվի առանձնահատկությունները՝ դպրոցական դասագրքերի հրատարակման նպատակով 1963 թ. մարտին Հայաստան ժամանեցին Վահե Վահյանը՝ Լիբանանից, և Մկրտիչ Մկրտչյանը՝ Սիրիայից<sup>1</sup>:

1960 թ. հունիսին ԱՄՆ-ից Հայաստան հրավիրվեց Ս. Պ. Թերզյանը՝ գիտատեխնիկական հարցերի Խորհրդատվության նպատակով, բժշկության բնագավառում՝ Համբարձում Կելիքյանը, էլեկտրամագնիսային տեսությունների գծով՝ Չարլզ Փափազը (Փափազյան) և ուրիշներ: 1965 թ. Հայաստանի գիտական հիմնարկներում աշխատելու նպատակով Երևան ժամանեցին ամերիկահայ անվանի գիտնականներ Սինաս Սևակը, Արծրուն Բախչինյանը և ուրիշներ:

Սփյուռքահայ գիտական կապերի ամրապնդման գործուն օղակներից էր գիտամանկավարժական կադրերի պատրաստումը հանրապետության գիտական կենտրոններում: Այդ նպատակով 1962 թ. և 1963 թ.-ին ընդլայնվեց արտասահմանյան հայերի ընդունելությունը հանրապետության բուհերը՝ նրանց թիվը 20 հոգուց հասցնելով 50-ի<sup>2</sup>: 1969 թ. հանրապետության բուհերում արդեն սովորում էին 420 սփյուռքահայ ուսանողներ: Նկատի ունենալով սփյուռքահայ բազմաթիվ երիտասարդների ցանկությունը՝ սովորելու հայրենիքում, հանրապետության ղեկավարությունը 1969 թ. սեպտեմբերի 30-ին ընդունեց որոշում «Արտասահմանյան հայերին ՀԽՍՀ բարձրագույն ուսումնական հաստատություններում ընդգրկելու մասին», որի իրագործման համար 1969-1970 թթ. երկու մասնագետ գործուղվեց Մերձավոր Արևելքի երկրներ՝ սփյուռքահայ ուսանողներ ընտրելու համար<sup>3</sup>:

Որակյալ մասնագետներ պատրաստելու նպատակով 1969 թ. Հայաստան հրավիրվեցին սփյուռքահայ դպրոցի ուսուցիչներ՝ թվով 30 հոգի՝ կատարելագործվելու հանրապետության տարբեր գիտական հիմնարկներում, ծանոթանալու Խորհրդահայ գիտության նվաճումներին: Միայն 1965 թ. նախատեսվում էր ընդունել արտասահմանից հայրենադարձվող 6.000 հայերի, որոնք տեղաբաշխվեցին Աբովյանում, Հրազդանում, Լենինականում /Գյումրի/, Հոկտեմբերյանում /Արմավիր/: Բազմաթիվ

<sup>1</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 43, գ. 10, թ. 25:

<sup>2</sup> Նույն տեղում, ց. 42, գ. 21, թ. 104:

<sup>3</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 49, գ. 17, թ. 103:

հայրենադարձ հայեր հայրենիքում ընդգրկվեցին գիտակրթական աշխատանքների ոլորտում և նրանցից շատերը 1960-1980-ական թթ. հանրապետության անվանի գիտնականների առաջավոր շարքում էին: Սփյուռքահայ այդ գիտնականները գիտության տարբեր ասպարեզներում հնարավորություն ստացան դրսևորելու իրենց ունակություններն ու հմտությունները: Նրանց թվում էին Գ. Գուրզադյանը, Զ. Վարդապետյանը, Խ. Կոկանյանը, Ս. Բուռնազյանը, Ս. Կրկաշարյանը, Զ. Բարթիկյանը, Կ. ճիկնոզյանը, Օ. Թոփուզյանը, Ա.Տեր-Ղևոնդյանը, Զ. Թութունջյանը, Մ. Դավթյանը և ուրիշներ:

Տակավիճ խորհրդային տարիներին Հայրենիք-Սփյուռք փոխադարձ սահմանափակ հարաբերությունների արյունատար անոթներին նորսնուցումու բովանդակային հաղորդեցին 1980-ական թվականների կեսերից ԽՍՀՄ-ում ընթացող, վերակառուցմամբ պայմանավորված տեղաշարժերը: Մասնավորապես 1988 թ. ավերիչ երկրաշաժից հետո Սփյուռքը, այդ ցավը համարելով իրենը, զորավիզ եղավ Խորհրդային Հայաստանին, ամուր կանգնեց հայրենիքի կողքին:

Հայրենիքում տեղի ունեցած սոցիալ-քաղաքական տեղաշարժերը, Խորհրդային Միության փլուզումը և Հայաստանի Հանրապետության անկախության հռչակումը նոր որակ հաղորդեցին Հայրենիք-Սփյուռք առնչություններին, ինչն ընդգրկեց բոլոր ոլորտները՝ հասարակական, քաղաքական, սոցիալ-տնտեսական և մշակութային: Այդ հարաբերությունները ձերբազատվեցին սահմանափակումներից և արգելքներից, դարձան անկաշկանդ, բազմաբնույթ և համակողմանի: Ժամանակի հրամայականով անհրաժեշտ եղավ գիտական պատշաճությամբ ներկայացնելու այդ նոր հարաբերությունների պատմությունը, դրանց բնույթը, վերլուծելու հարաբերությունների ընթացքը, ցույց տալու ձեռքբերումները, բացթողումներն ու թերությունները, վեր հանելու դրանց նոր միտումներն ու հեռանկարները: Այդ դժվարին գործին համարձակորեն ձեռնամուխ է եղել Ք. Պետրոսյանը, որի աշխատանքը սկզբում հաջողությամբ պաշտպանվել է որպես թեկնածուական ատենախոսություն, ապա ընթերցողի դատին է ներկայացվել որպես մենագրություն:

Ք. Պետրոսյանի աշխատությունը նվիրված է հայոց ընթացիկ պատմության արդիական կարևոր հիմնահարցերից մեկին: Այն նպատակ է հետապնդում բացահայտելու Հայաստանի և Սփյուռքի միջև 1990-ական թվականներին հաստատված գործուն հարաբերությունները և դրանց նշանակությունը: Փոքր-ինչ հավակնոտ խորագիր կրող այս աշխատությունը բնականաբար չէր կարող ընդգրկել Սփյուռքի բոլոր համայնքները՝ իրենց գործունեության մանրամասն նկարագրով: Սակայն այն իր տեսակի մեջ եզակի է, առանձնանում է առավել ամբողջական և ամփոփ ներկայացնելով Հայրենիք-Սփյուռք առնչությունները բոլոր մակարդակներում՝ հնարավորինս ներառելով այդ հարաբերությունների նախապատմությունը, բազմակողմանի դրսևորումները, դրանց նախադրյալներն ու պատճառահետևանքային կապերը:

Սփյուռքի պատմության առանձին դրվագների, բարեգործական ընկերությունների, սփյուռքահայ անհատ գործիչների, հասարակական կազմակերպությունների, քաղաքական կուսակցությունների, հայրենադարձության խնդիրները տարբեր ասպեկտներով լուսաբանվել են թե՛ հայաստանյան, և թե՛ Սփյուռքի բազմաթիվ հեղինակների կողմից<sup>1</sup>: Սակայն արդի ժամանակներում Հայրենիք-Սփյուռք հարաբերու-

<sup>1</sup> Տե՛ս Խուրշուդյան Լ., Սփյուռքահայ կուսակցությունները ժամանակակից ետապում, Եր., 1964: **Համազասպյան Կ.**, Սովետական Հայաստանը և Սփյուռքը, Եր., 1980: **Ալեք Մանուկյան**, Անիի պահպանու-

թյունների բոլոր ոլորտներն ընդգրկող ամբողջական գիտական աշխատություն առաջին անգամ շարադրվել է Ք. Պետրոսյանի կողմից:

Քննության առնելով հիմնահարցը՝ հեղինակը ներկայացրել է ամբողջության մեջ ավարտուն մի հետազոտություն, որն իր խորությամբ, փաստառատ նյութի և հրապարակում եղած համապատասխան գրականության հմուտ օգտագործմամբ նշանակալից ներդրում է հիմնախնդրի գիտական լուսաբանման գործում: Հաղթահարելով մի շարք բարդություններ՝ Ք. Պետրոսյանը կարողացել է բացահայտել Հայրենիք-Սփյուռք առնչություններում Սփյուռքի տարատեսակ և բազմաբնույթ գործունի դերն ու առանձնահատկությունները, վերհանել տարաբնույթ գործունեության հիմնական ուղղություններն ու նշանակությունը: Աշխատանքն արժևորվում է նաև այն առումով, որ հեղինակն ուսումնասիրությունը շարադրել է թեմային առնչվող գրեթե ամբողջ գրականության հիման վրա՝ ընդգրկելով ինչպես սփյուռքահայ, այնպես էլ հայրենական պատմագիտության նվաճումները ողջ բազմազանությամբ և համակողմանիությամբ՝ դրսևորելով ինքնուրույն և քննական մոտեցում: Հեղինակի օգտագործած արխիվային փաստաթղթերը գիտական շրջանառության մեջ են դրվել առաջին անգամ:

Աշխատության մյուս կարևոր արժանիքն այն է, որ նա ընդգրկում է ժամանակակից, ընթացիկ պատմության խնդիրները: Ամենևին չնվազեցնելով հնագույն և հին շրջանի պատմության շարադրման դժվարությունները՝ կապված հին վավերագրերի, արխիվային նյութերի հայթայթման հետ, ընթացիկ պատմության շարադրանքն ունի իր յուրօրինակ բարդությունները: Այն շոշափում է կենդանի իրողություններ, մատուցում դեպքեր, որոնք տակավին թարմ են, զնահատում գործիչների, ուլքեր գործնական քաղաքականության մեջ են, ունեն ազդեցության լծակներ: Հետևապես գործող նոր հազամանքները քաղաքացիական համարձակություն և անաչառություն են պահանջում, որն էլ հաջողվել է աշխատության հեղինակին: Խնդրո առարկա հիմնահարցը արդիական է, մանավանդ որ արժարծվում են ինչպես գիտաճանաչողական, այնպես էլ գործնական-քաղաքական նշանակության հարցեր: Նմանօրինակ հիմնահարցի հետազոտումը բարդանում է թե՛ թեմատիկ, թե՛ նյութի անբավարար մշակվածության և թե՛ ժամանակագրական առումներով:

Մենագրության մեջ, որը 1990-ական թթ. Հայրենիք-Սփյուռք առնչությունները լուսաբանող առաջին փորձերից է, աղբյուրագիտական հարուստ հենքի՝ արխիվային և այլ նյութերի հիման վրա հանգամանորեն քննության են առնված Հայրենիք-Սփյուռք կապերի բոլորովիննոր և հիմնարար փուլի ձևավորման նախադրյալները, սկսած Սպիտակի երկրաշարժից հետո հայրենիքում Սփյուռքի մարդասիրական լայնածավալ գործունեությունից և վերջացրած զարգացման մեծածավալ ծրագրերի կենսագործմամբ ու Հայրենիք-Սփյուռք առնչությունները պետական մակարդակի վրա դնելու քաղաքականությամբ: Այլ խոսքով, Ք. Պետրոսյանը հիմնախնդիրը լուսաբանել է իր երևութական և խորքային բոլոր նրբերանգներով: Ընդգծվել է մասնա-

---

թյան և ուսումնասիրման միջազգային գիտական կենտրոն, Եր., 1994: Փրկենք ՀԲԸ միությունը, Նիւ Եորք, 1994: **Մելիքսեթյան Հ.**, Հայրենիք-Սփյուռք առնչությունները և հայրենադարձությունը (1920-1980), Եր., 1985, խմբ. փրոֆ. **Վ. Բ. Բարխուդարեանի** եւ դոկտ. **Զաւեն Եկաւեանի**, Էջեր հայ գաղթավայրերի պատմութեան, Եր., 1996: **Մելքոնյան Էդ.**, Հայկական բարեգերծական ընդհանուր միությունը Խորհրդային Հայաստանում 1923-1937 թթ., Եր., 1999: **Ավագյան Ք.**, Ամերիկայի Միացյալ Նահանգների հայ գաղութի պատմությունը, Եր., 2000: **Հարությունյան Ն.**, Լիբանանի և Սիրիայի հայկական դպրոցները, Եր., 2002, **Тер-Саркисянц А. Е., Худавердян В. Ц.**, Армянская диаспора Юга России, М., 1993:

վորապես այն միտքը, որ ժամանակագրական առումով որակապես նոր բովանդակությամբ հարստացած այդ գործընթացը նշանավորվել է ծրագրերի հստակեցմամբ, մոտեցումների ճշգրտմամբ, նոր որոնումներով, գոյություն ունեցող կառույցների բյուրեղացման հիմքի վրա Հայրենիք-Սփյուռք հարաբերությունների ամրապնդմամբ: Դրանցով ամբողջացվում էին երկուստեք գերագույն նպատակին հասնելու ձգտումները: Ինչպես վերը նշվեց, աշխատանքը դուրս է գալիս զուտ ճանաչողական, տեսական նշանակության շրջանակներից: Նրա գործնական նշանակությունն այն է, որ հեղինակի կողմից կուտակված և դասդասված հարուստ նյութի շարադրանքի տրամաբանությունից ուրվագծվում է Հայրենիք-Սփյուռք հարաբերությունները պետաիրավական հարթության վրա դիտարկելու անհրաժեշտությունը: Իսկապես, վերջիներս խարսխվեցին հիշյալ համատեքստում ձեռք բերված ծավալուն արդյունքների վրա և այդ հարաբերություններին ինստիտուցիոնալ-կազմակերպչական բնույթ հաղորդեցին: Դրանք իրենց իրավական, օրենսդրական արտահայտությունը գտան երկբաղաքացիության մասին 1995 թ. Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի ընդունած օրենքում<sup>1</sup>: Սփյուռքի նկատմամբ պետական քաղաքականության իրականացման նպատակով 2008 թ. սեպտեմբերի 11-ին ՀՀ կառավարությունը ընդունեց «ՀՀ Սփյուռքի նախարարության աշխատակազմ» պետական-կառավարչական հիմնարկ ստեղծելու, ՀՀ Սփյուռքի նախարարության կանոնադրությունը և աշխատակազմի կառուցվածքը հաստատելու մասին որոշում<sup>2</sup>: Օրենսդրական համապատասխան դաշտի առկայությունը և նորաստեղծ Սփյուռքի նախարարությունը Հայրենիք-Սփյուռք հարաբերությունները դարձրեցին ավելի առարկայական և համակարգված:

Մենագրության մեջ բազմաթիվ աղբյուրների հիման վրա փորձ է արվել ներկայացնելու Սփյուռքի քաղաքական կուսակցությունների, Հայ դատի հանձնախմբերի տարած աշխատանքները Հայոց ցեղասպանության դատապարտման և ճանաչման, ինչպես նաև արցախյան պայքարի խնդիրների ուղղությամբ: Ցույց են տրվել հայ ավանդական քաղաքական կուսակցությունների վերադարձի նախադրյալները հայրենիք, նրանց, մասնավորապես ՀՀԿ կուսակցության ունեցած տարածայնությունները ՀՀ իշխանությունների հետ մի շարք արմատական հարցերի առնչությամբ: Լուսաբանվել է նաև Սփյուռքում հայապահպանության ուղղությամբ Հայրենիք-Սփյուռք առնչությունների հետագա ծավալման ու զարգացման անհրաժեշտությունը: Հեղինակը իրավացիորեն ընդգծում է. «Չնայած գաղափարական և գործունեության ձևերի որոշակի տարբերությունների՝ սկզբունքային համազգային նշանակություն ունեցող հարցերում կուսակցությունները դրսևորում էին միասնական մոտեցում և անգամ հանդես էին գալիս համատեղ հայտարարություններով»<sup>3</sup>:

Հետազոտությունը լիարժեք և ամբողջական չէր լինի, եթե միաժամանակ փորձ չարվեր ներկայացնելու 1990-ական թթ. սփյուռքահայ մի շարք նշանավոր կազմակերպությունների, միությունների, անհատ գործիչների գործունեությունը Հայրենիքում, ինչպես նաև չընդգծվեր Սփյուռքի վիթխարի դերը նորաստեղծ Հայաստանի Հանրապետության հասարակական-քաղաքական, սոցիալ-տնտեսական և մշակութային կյանքում: 1988-2001 թթ. տնտեսության մեջ նշանակալի տեղաշարժերը

<sup>1</sup> Տես Քաղաքացիության մասին օրենք, հոդ. 13<sup>1</sup>, arils.am:

<sup>2</sup> arils.am. որոշում, № 1049-Ն:

<sup>3</sup> Նույն տեղում, էջ 26:

կապված էին երկրաշարժի, Արցախյան պատերազմի, Ադրբեջանի շրջափակման հետևանքով երկրում ստեղծված ծանր իրավիճակի, նաև Ադրբեջանից, Լեռնային Ղարաբաղից և Աբխազիայից հազարավոր փախստականների ներհոսքի հետ: Երկրաշարժից անմիջապես հետո համայն հայությունը վիթխարի օգնություն առաքեց հայրենիք: Հայաստան ժամանեցին և աղետյալներին օգնության հասան հարյուրավոր սփյուռքահայ բժիշկներ, գործարարներ, հասարակական գործիչներ, կազմակերպություններ («ՍՈՍ Արմենի», «Ազնավուրը՝ Հայաստանին», «Հույս Հայաստանի համար», «Գալուստ Կյուլպենկյան բարեսիրական և գիտամշակութային հիմնարկություն», «Միացյալ հայկական ֆոնդ», «Լինսի» հաստատություն, «Հովարդ Կարագոյան», «Հայաստանի մանկատների հիմնադրամ», «Ջինիշյան հիշատակի ծրագիր», «Գաֆեսճյան ընտանիքի հիմնադրամ», «Ամերիկայի հայկական համագումար, ՅԲԸՄ, ՀՕՄ, ՀՕՖ և այլն»): Սփյուռքահայ բարեգործական կազմակերպությունները, ինչպես նշում է հեղինակը, ծրագրեր էին իրականացնում համայնքների և գործարարության զարգացման, բնակարանաշինության, առողջապահության և հոգևոր ոլորտներում: Սփյուռքի օգնությունը համակարգելու նպատակով 1992 թ. մարտին ստեղծվեց «Հայաստան» համահայկական հիմնադրամը<sup>1</sup>, որը սփյուռքահայերի նվիրատվությունների շնորհիվ լայնածավալ ծրագրեր է իրագործում Հայաստանի Հանրապետությունում և ԼՂՀ-ում:

Հայրենիք-Սփյուռք հարաբերությունները որակական նոր մակարդակով կառուցելու ուղղությամբ շրջադարձային էր 1999 թ. սեպտեմբերի 22-23-ին Երևանում աշխարհի 50 երկրներից, ՀՀ և Արցախի շուրջ 1200 հոգևոր և աշխարհիկ կառույցների ներկայացուցիչների մասնակցությամբ կայացած Հայաստան-Սփյուռք առաջին խորհրդրդաժողովը, որը համահայկական կառույց ստեղծելու ՀՀ-ի առաջին փորձն էր<sup>2</sup>: Ինչպես ճիշտ նկատում է հեղինակը, խորհրդաժողովը առանձնահատուկ և ամբողջական էր քաղաքական, աշխարհագրական, ներկայացուցչական և հոգևոր առումներով, քանի որ այն առաջինն էր, որին մասնակցում էին մեր ժողովրդի բոլոր հատվածների ներկայացուցիչները՝ Հայաստանն ու ԼՂՀ-ն՝ իրենց համայնքային կառույցներով, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը, Տանն Կիլիկիո կաթողիկոսությունը, Հայ Կաթողիկե և Ավետարանական եկեղեցիները՝ իրենց հոգևոր առաջնորդներով:

Հեղինակը միանգամայն հիմնավոր անդրադարձ է կատարել նաև Հայ Առաքելական, Ավետարանական և Կաթոլիկ եկեղեցիների գործունեությանը, ԽՍՀՄ-ի փլուզումից հետո նրանց հաղթահարած արգելքների, հայրենիքում հաստատվելու և բոլոր ասպարեզներում (տնտեսական, հոգևոր, մշակութային, քաղաքական և այլն) ծավալած ազգանպաստ գործունեությանը, ինչպես նաև եկեղեցու տարանջատման վերացման ուղղությամբ փոխադարձ ձեռնարկած հայրենամուտ ջանքերին: Առանձնապես կարևորվել է Վենետիկի և Վիեննայի Մխիթարյան միաբանությունների՝ հայապահպանության գործում ունեցած վիթխարի դերը, հայրենիքի մտահոգությունը միաբանությունների հետագա ճակատագրի հանդեպ և որպես վառ օրինակ՝ երկու միաբանությունների միավորումը: Ինչպես վերը նշեցինք, նմանատիպ աշխատություն շարադրելը ոչուրին գործ չէ, և հեղինակը կարող էր գայթակղվել հակասական այն մոտեցումներով, որոնք առկա էին քաղաքական կուսակցությունների, հոգևոր մարմինների գործունեության մեջ: Ի պատիվ հեղինակի պետք է խոստովանել, որ

<sup>1</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ. 113, ց. 168, գ. 112, ք. 6:

<sup>2</sup> «Հայաստանի Հանրապետություն», 23 սեպտեմբերի, 1999:

նա խուսափել է միակողմանի գնահատականներից և իրողությունները գնահատել անաչառ դիրքերից:

Արխիվային փաստաթղթերի հիման վրա առաջին անգամ ներկայացվել են 1990-ական թթ. Հայաստան-Սփյուռք լայնածավալ հարաբերությունների հաստատման նախադրյալները, պատճառները, այդ հարաբերությունների աստիճանական զարգացումն ու խորացումը Հայաստանի Հանրապետության, ԼՂՀ-ի և Սփյուռքի ձևաչափով:

Աշխատանքի կարևոր ներդրումներից մեկը հեղինակի կողմից հարուստ և առատ փաստական նյութի կուտակումն է, այդ նյութերի հիմունքում համադրումը և արդյունավետ օգտագործումը աշխատության մեջ: Դրան զուգահեռ, հավաքված բազմաքանակ նյութը հնարավորություն է ընձեռել համադրման ճանապարհով կատարել կարևոր ընդհանրացումներ, տալ իրողությունների որակական գնահատականները, անել անհրաժեշտ եզրակացություններ:

Նյութի խոր իմացությունը, փաստերի բազմակողմանի լուսաբանումը աշխատության հեղինակին հնարավորություն են ընձեռել կատարելու հայեցակարգային եզրահանգումներ՝ Սփյուռքի համայնքների գոյությունն ու դրանց զարգացումը որպես փաստական իրողություն, ժամանակավոր կացություն դիտարկելու, որի գերագույն նպատակը, ի վերջո, հայրենիքի հետ մի ամբողջություն կազմելն է, նրա հետ միասնաձայն, կորցրած արժեքները վերագտնելը «Մեկ ազգ-մեկ մշակույթ-մեկ հավատ-մեկ հայրենիք» կարգախոսը իրականություն դարձնելը:

Խոսքի թարմությամբ, մտքի հետևողական և կուռ տրամաբանությամբ, քաղաքացիական համարձակությամբ և ջերմ հայրենասիրությամբ տոգորված սույն աշխատության մեջ հեղինակին հաջողվել է լուծել իր առջև դրված խնդիրը, արժևորել և անաչառ գնահատություններ տալ Հայաստան-Սփյուռք արդի բազմաբնույթ խնդիրներին՝ ցույց տալով նաև առկա դժվարություններն ու բացթողումները:

**Է. Լ. Ձոհրաբյան**  
*Պատմ. գիտ. թեկն., դոցենտ*

